

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY  
FACULTY OF HISTORY

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ**  
**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ**

**ИСТОРИЯ И КУЛЬТУРА**  
**АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ**

**HISTORY AND CULTURE**  
**JOURNAL OF ARMENIAN STUDIES**

**№ 1**

**ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN**  
**ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS**  
**2020**

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի  
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ**

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**  
*խմբագրական խորհուրդ՝*

**Արման Եղիազարյան** (խմբագիր, պ.գ.դ., դոց.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Իգիթ Ղարիբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ջենրիկ Աբրահամյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**  
*Редакционная коллегия:*

**Арман Егиазарян** (редактор, д.и.н., доц.), **Арам Симонян** (директор Института Арменоведческих исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Артак Мовсисян** (д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Игит Гарибян** (д.и.н., проф.), **Генрих Абраамян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетыан** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**  
*Editorial Board:*

**Arman Yeghiazaryan** (editor, Doctor of Sciences, associate prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD of History, associate prof.).

**ISSN 1829-2771**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ  
СОДЕРЖАНИЕ / CONTENT**

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY**

<b>Էդիկ Մինասյան</b> – ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳՈՐԾՈՒՄ (1941-1945 ԹԹ.).....	8
<b>Эдик Минасян</b> – ВКЛАД АРМЯНСКОГО НАРОДА В ПОБЕДУ В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ (1941-1945 ГГ.).....	32
<b>Edik Minasyan</b> – THE CONTRIBUTION OF THE ARMENIAN PEOPLE TO THE VICTORY IN THE WORLD WAR II (1941-1945). .....	33
<b>Արտակ Մովսիսյան</b> – ՀԱՅ ԷԹՆՈՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԻՆ (ԸՍՏ ԱՏՐԱԲՈՆԻ ԿԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ).....	34
<b>Артак Мовсисян</b> – ГЕОГРАФИЯ РАСПРОСТРАНЕНИЯ АРМЯНСКОГО ЭТНОСА НАКАНУНЕ НАШЕЙ ЭРЫ (ПО СВЕДЕНИЯМ СТРАБОНА).....	40
<b>Artak Movsisyan</b> – THE GEOGRAPHY OF THE SPREAD OF THE ARMENIAN ETHNOS ON THE EVE OF OUR ERA (ACCORDING TO STRABO).....	40
<b>Միքայել Մալխասյան</b> – ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐԵՎՍՏՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԸՍՏ ԿԱԿԴԻՈՍ ՊՏՐՈՍԵՆՈՍԻ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ».....	41
<b>Микаэл Малхасян</b> – ЗАПАДНЫЕ ГРАНИЦЫ ВЕЛИКОЙ АРМЕНИИ ПО “ГЕОГРАФИИ” КЛАВДИЯ ПТОЛЕМЕЯ. ....	47
<b>Mikayel Malkhasyan</b> – THE WESTERN BORDERS OF GREATER ARMENIA IN CLAUDIUS PTOLEMY’S “GEOGRAPHY”. .....	47
<b>Էդգար Վարշամյան</b> – ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՈՒՍԵԱ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱՎԱՍԱՐՏՈՒԹՅԱՆ ԾԻՐՈՒՄ. ԱՐՇԱԿ Բ-Ի ԱՐՏԱՔԻՆ ԶԱՐԱԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ .....	49
<b>Эдгар Варшамян</b> – АРМЕНИЯ В РАЗГАР РИМСКО-ПЕРСИДСКОГО КОНФЛИКТА: ВНЕШНЯЯ ПОЛИТИКА АРШАКА II. ....	60
<b>Edgar Varshamyan</b> – ARMENIA IN THE MIDST OF THE ROMAN-PERSIAN CONFLICT: THE FOREIGN POLICY OF ARSHAK II. ....	61
<b>Արգիշտի Վարդանյան</b> – ՄԱՆՎԵԼ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱԿԱԼ ԵՎ ԿԱՌԱՎԱՐԻՉ .....	62
<b>Аргисhti Варданян</b> – МАНВЕЛ МАМИКОНЯН – РЕГЕНТ И УПРАВЛЯЮЩИЙ ЦАРСТВОМ ВЕЛИКОЙ АРМЕНИИ. ....	68
<b>Argishti Vardanyan</b> – MANVEL MAMIKONYAN – REGENT AND RULER OF THE KINGDOM OF GREATER ARMENIA. ....	68
<b>Արման Եղիազարյան</b> – ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՌԱՎՍՄԱՆ ՊԱՏՃԱՌ ԴԱՐՁԱԾ ՄԻ ԴԱԿԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ.....	70
<b>Арман Егиазарян</b> – О ЗАГОВОРЕ, ПРИВЕДШЕМ К РАСКОЛУ БАГРАТИДСКОГО ЦАРСТВА. ....	79
<b>Arman Yeghiazaryan</b> – ON A CONSPIRACY THAT CAUSED THE SPLIT OF THE BAGRATUNIES KINGDOM. ....	79
<b>Արարատ Ստեփանյան</b> – ՓԻԼԱՐՏՈՍ ԿԱՐԱԺՆՈՒՆՈՒ ՊԱՏԿԱՏԻՏՐՈՍՆԵՐԸ .....	81
<b>Арарат Степанян</b> – ПОЧЕТНЫЕ ТИТУЛЫ ФИЛАРЕТА ВАРАЖНУНИ.....	86
<b>Ararat Stepanyan</b> – THE HONORARY TITLES OF PHILARETOS BRACHAMIOS.....	86

<b>Սեյրան Չաքարյան</b> – ԱՉԳԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԵՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ (ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅԻ ԵՎ ՂԱԶԱՐ ԶԱՀԿԵՑԻ).....	88
<b>Сейран Закарян</b> – ПРОБЛЕМА ХАРАКТЕРИСТИКИ НАЦИИ В ХРИСТИАНСКОЙ ПАРАДИГМЕ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ (ГРИГОР ТАТЕВАЦИ И ГАЗАР ДЖАХКЕЦИ).....	97
<b>Seyran Zakaryan</b> – THE PROBLEM OF CHARACTERIZATION NATION IN THE CHRISTIAN PARADIGM OF ARMENIAN IDENTITY (GRIGOR TATEVATSI AND GHAZAR JAHKETSİ).....	98
<b>Սարգիս Բալդարյան</b> – ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ԿԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՆՆԱՐԿՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՑԱՆՑՈՒՄ.....	99
<b>Саркис Балдарян</b> – ЦИРКУЛЯЦИЯ КОММЕРЧЕСКИХ УЧЕБНИКОВ КОНСТАНТА ДЖУГАЕЦИ В ТОРГОВОЙ СЕТИ НОВОЙ ДЖУЛЬФЫ.....	106
<b>Sargis Baldaryan</b> – THE CIRCULATION OF COMMERCIAL HANDBOOKS OF CONSTANT OF JULFA IN THE TRADE NETWORK OF NEW JULFA. ....	106
<b>Արարատ Հակոբյան</b> – 1920 Թ. ԹՈՒՐԵ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿՍՄԱՆ ՕՐԿԱ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (ՊԱՏԵՐԱԶՄԻ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ).....	108
<b>Арарат Акопян</b> – К ВОПРОСУ О ДАТЕ НАЧАЛА ТУРЕЦКО-АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1920 Г. (К 100-ЛЕТИЮ ВОЙНЫ).....	117
<b>Ararat Hakobyan</b> – ABOUT THE DATE OF THE BEGINNING OF THE TURKISH-ARMENIAN WAR IN 1920 (TO THE 100TH ANNIVERSARY OF THE WAR).....	117
<b>Նելլի Մինասյան</b> – 1920 ԹՎԱԿԱՆԻ ԹՈՒՐԵ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՍԱԹՅՈՒՐԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ.....	118
<b>Нелли Минасян</b> – ТУРЕЦКО-АРМЯНСКАЯ ВОЙНА 1920 ГОДА И ПЛАНЫ ПАН-ТЮРКИЗМА.....	123
<b>Nelli Minasyan</b> – THE TURKISH-ARMENIAN WAR OF 1920 AND THE PROGRAMS OF PAN-TURKİSM.....	123
<b>Սուրեն Ավետիսյան</b> – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵՇ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ.....	124
<b>Сурен Аветисян</b> – ДЕЯТЕЛЬНОСТЬ ОБЩЕСТВА КРАСНОГО КРЕСТА АРМЕНИИ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.....	131
<b>Suren Avetisyan</b> – THE ACTIVITY OF RED CROSS SOCIETY OF ARMENIA IN THE YEARS OF THE GREAT PATRIOTIC WAR.....	131
<b>Առնակ Սարգսյան</b> – ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈՎԱԿԱՐԱՑՄԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ՀՀ 2018 Թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ).....	132
<b>Арнак Саргсян</b> – УЧАСТИЕ В ИЗБИРАТЕЛЬНОМ ПРОЦЕССЕ В РЕАЛИЯХ ДЕМОКРАТИЗАЦИИ (НА ПРИМЕРЕ ВЫБОРОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ В 2018 Г.).....	139
<b>Arnak Sargsyan</b> – PARTICIPATION IN THE ELECTORAL PROCESS IN THE REALITIES OF DEMOCRATIZATION (ON THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARMENIA IN 2018 ELECTIONS).....	139
<b>Գայանե Թովմասյան, Ռուբիկ Թովմասյան</b> – ՉՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՅՈՒՐԸՆԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ (ԱՇԽԱՐՀ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ).....	140
<b>Гаяне Товмасян, Рубик Товмасян</b> – БУДУЩИЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ТУРИЗМА И ИНДУСТРИИ ГОСТЕПРИИМСТВА В МИРЕ И В АРМЕНИИ.....	149

**Gayane Tovmasyan, Rubik Tovmasyan – FUTURE TRENDS OF TOURISM AND HOSPITALITY INDUSTRY DEVELOPMENT IN THE WORLD AND IN ARMENIA.** ..... 149

**Արշալույս Տետեյան – ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵՆՆԱ-ՑԻՆ ԴԱՐԱԲԱՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱԶԵՎԵՐՈՒՄ** ..... 150

**Аршалуys Тетейан – ВОПРОС ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН И ПРОБЛЕМА НАГОРНОГО КАРАБАХА В РЕЗОЛЮЦИЯХ ЕВРОПЕЙСКОГО ПАРЛАМЕНТА.** ..... 156

**Arshaluys Teteyan – RECOGNITION OF ARMENIAN GENOCIDE AND NAGORNO-KARABAKH PROBLEM IN THE RESOLUTIONS OF EUROPEAN PARLIAMENT.** ..... 156

**ՀԱՎԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY**

**Ռաֆիկ Նահապետյան – ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՆՆԱՇԽԱՐՀԸ՝ ԱՆԱՍՆԱՊԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՎԱՌՅՆ ԿԵՆՏՐՈՆ (ԸՍՏ ՀԱՎԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԱՆՏԻԿ ԳՐԱԿՈՐ ԱՐՔԵՈՒՐՆԵՐԻ)** ..... 157

**Рафик Наапетян – АРМЯНСКОЕ НАГОРЬЕ - ДРЕВНЕЙШИЙ ЦЕНТР СКОТОВОДЧЕСКОЙ КУЛЬТУРЫ (ПО АРХЕОЛОГИЧЕСКИМ МАТЕРИАЛАМ И АНТИЧНЫМ ПИСЬМЕННЫМ ИСТОЧНИКАМ).** ..... 162

**Rafik Nahapetyan – ARMENIAN HIGHLAND - THE MOST ANCIENT CENTRE OF CATTLE BREEDING CULTURE (ACCORDING TO ARCHAEOLOGICAL MATERIALS AND ANCIENT WRITTEN SOURCES).** ..... 162

**Քրիստինա Այվազյան – ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ** ..... 163

**Кристина Айвазян – БЛАГОТВОРИТЕЛЬНОСТЬ В АРМЯНСКИХ НАРОДНЫХ СКАЗКАХ.** ..... 174

**Christina Ayvazyan – CHARITY IN THE ARMENIAN FAIRY TALES.** ..... 175

**ԱՐԿԵՍ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE**

**Գեղամ Ասատրյան, Ավետիս Գրիգորյան – ՄԱՔՐԱՎԱՆԻ ԽԱՉՔԱՐԵՐԸ (XII-XIV ԴԴ.)** ..... 176

**Гегам Асатрян, Аветис Григорян – ХАЧКАРЫ МАКРАВАНКА (XII-XIV ВВ.)** ..... 181

**Gegham Asatryan, Avetis Grigoryan – THE CROSSLINES OF MAKRAVANK (XII-XIV CENTURIES).** ..... 181

**Մոնթե Մաթևոսյան – ՋՐԱՌԱՏԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵՎԵՂԵՑՈՒ ԽԱՉՔԱՐԵՐԸ** ..... 185

**Монте Матевосян – ХАЧКАРЫ ЦЕРКВИ СВЯТОГО КАРАПЕТА В ДЖРАПАТЕ** ..... 188

**Monte Matevosyan – THE KHACHKARS OF JRARAT ST. KARAPET CHURCH.** ..... 188

**Շուշանիկ Համբարյան – ԵՐՈՒՍԱՂԵՍԻ Հ<sup>մ</sup> 1970 ԱՎԵՏԱՐԱՆԸ ԵՎ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԻ ՈՒՇ ՇՐՋԱՆԻՆ ԲՆՈՐՈՇ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱԳՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** ..... 191

**Шушаник Амбарян – РУКОПИСЬ № 1970 ЕВАНГЕЛИЯ ИЕРУСАЛИМА И ИКОНОГРАФИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ МИНИАТЮР, ХАРАКТЕРНЫЕ ДЛЯ ПОЗДНЕГО ПЕРИОДА.** ..... 199

**Shushanik Hambaryan – № 1970 GOSPEL OF JERUSALEM AND THE ICONOGRAPHIC FEATURES OF THE MINIATURES CHARACTERISTIC OF THE LATE-PERIOD.** ..... 199

**ՍՓՅՈՒՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES**

**Հրածին Վարդանյան** – ՍՓՅՈՒՌԻ ՏԻՊՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ՀԱՅ ՍՓՅՈՒՐԸ..... 202  
*Грацин Варданян – ТИПОЛОГИЯ ДИАСПОРЫ И АРМЯНСКАЯ ДИАСПОРА.* ..... 207  
*Hratsin Vardanyan – TYPOLOGY OF DIASPORAS AND THE ARMENIAN DIASPORA.* ..... 208

**Ալիկ Ղարիբյան, Գայանե Գալստյան** – ՀՅԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՒԹՅԱՆ ՍԿԶԲԱԿՈՒՐՈՒՄԸ ԱՄՆ-ՈՒՄ..... 209  
*Алик Гарибян, Гаяне Галстян – НАЧАЛО ДЕЯТЕЛЬНОСТИ АРФ ДАШНАКЦУТИОН В США.* ..... 214  
*Alik Gharibyan, Gayane Galstyan – THE BEGINNING OF ARF DASHNAKTSUTYUN ACTIVITY IN THE USA.* ..... 215

**Էդգար Հովհաննիսյան** – ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱԿՆՈՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՀԱՅԱՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ..... 216  
*Эдгар Ованесян – СОЗДАНИЕ ВОСКРЕСНЫХ ШКОЛ КИЛИКИЙСКОГО КАТОЛИКОСАТА И ИХ РОЛЬ В СОХРАНЕНИИ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ.* ..... 225  
*Edgar Hovhannisyanyan – THE FOUNDATION OF SUNDAY SCHOOLS OF THE CATHOLICOSATE OF THE GREAT HOUSE OF CILICIA AND THEIR ROLE IN PRESERVATION OF THE ARMENIAN IDENTITY.*..... 225

**Մարիամ Հակոբյան** – ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵՎԵՂԵՑՈՒ ՀՈՒՆԱՅԱՅՈՑ ԹԵՄԵՐԻ ՁԵՎԱԿՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԿԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 1920-1930-ԱՎԱՆ ԹԹ..... 226  
*Мариам Акопян – ФОРМИРОВАНИЕ ЕПАРХИЙ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ В ГРЕЦИИ И ИХ АДМИНИСТРАТИВНО-ДЕМОГРАФИЧЕСКОЕ ОПИСАНИЕ В 1920-1930-Х ГГ.* ..... 231  
*Mariam Hakobyan – THE FORMATION OF THE GREEK-ARMENIAN DIOCESES OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH AND THEIR ADMINISTRATIVE-DEMOGRAPHIC DESCRIPTION IN THE 1920s AND 1930s.*..... 231

**Նարինե Նուշերվանյան** – «ՍՓՅՈՒՐԸ-ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ԵՐԿԻՐ-ՀԱՅՐԵՆԻՔ» ՓՈԽ-ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՌԱՆԿՅՈՒՄԱԶԵՎ ՍՈՂԵԼԸ..... 232  
*Нарине Нушерванян – ТРЕХСТОРОНЯЯ МОДЕЛЬ ВЗАИМООТНОШЕНИЙ “ДИАСПОРА-ПРИНИМАЮЩАЯ СТРАНА-РОДИНА”* ..... 240  
*Narine Nushervanyan – “DIASPORA-HOST COUNTRY-HOMELAND” TRIANGULAR MODEL OF RELATIONS.* ..... 241

**Գևորգ Ղուկասյան** – ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅՎԱԿԱՆ ՍՓՅՈՒՐԻ ԼՈՐԲԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՒԹՅԱՆ ՇՈՒՐՉ..... 242  
*Геворг Гукасян – О ЛОББИСТСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ В ЗАПАДНОЙ ЕВРОПЕ.* ..... 250  
*Gevorg Ghukasyan – ON THE LOBBYING ACTIVITIES OF THE ARMENIAN DIASPORA IN WESTERN EUROPE.*..... 251

**ԱՐՔՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES**

**Հայկազ Հովհաննիսյան, Կարեն Բայրամյան** – ՆՈՐԱՅԱՅՑ ԿԱԿԵՐԱԳՐԵՐ ԼԱՁԱՐՅԱՆՆԵՐԻ ԱՐԽԻՎԻՑ ..... 252

*Այկազ Օգանեսյան, Կարեն Բայրամյան – НОВОВЫЯВЛЕННЫЕ ДОКУМЕНТЫ ИЗ АРХИВА ЛАЗАРЕВЫХ.* ..... 261

*Haikaz Hovhannisyan, Karen Bayramyan – NEWLY REVEALED DOCUMENTS FROM THE LAZAREVS ARCHIVE.* ..... 261

**Հովիկ Գրիգորյան, Հայկ Մխոյան – ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԵՎ ԼԵՈՅԻ ՆԱՍԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ** ..... 262

*Օւիւկ Գրիգորյան, Այկ Մխոյան – ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА И ЛЕО.* ..... 273

*Hovik Grigoryan, Haik Mkhoyan – FROM THE LETTERS OF DAVID ANANUN AND LEO.* ..... 274

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՅԹՈՂԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL**

**Արա Հովհաննիսյան – ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՆԴՈՒՄԸ (ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄԵԹՈՂԱԿԱՆ ՈՐԵՆԻՇՆԵՐ)**..... 275

*Արա Օգանեսյան – УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЕ ПРИНЦИПЫ И ОСОБЕННОСТИ КУРСА “ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ”.* ..... 281

*Ara Hovhannisyan – EDUCATIONAL AND METHODOLOGICAL PRINCIPLES AND FEATURES OF THE COURSE “HISTORY OF ARMENIAN DIASPORA”.* ..... 282

**ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW**

**Վարինե Եղիազարյան, Մերի Հովհաննիսյան. ЭДИК МИНАСЯН – ГЕРОИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНОК В ГОДЫ ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ КОНЦА XIX-НАЧАЛА XX ВЕКА, МОСКВА, «ЭДИТУС», 2020, 252 С** ..... 283

**Էդիկ Մինասյան, Էդիկ Չոհրաբյան. ՀԵՆՐԻԿ ԱՐՐԱՀԱՄՅԱՆ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴԴՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՍԿԻՉԲԸ (1956 Թ. ՓԵՏՐՎԱՐ – 1991 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ), Ե., ԵՊՅ ՀՐԱՏ., 2019, 398 ԷԶ** ..... 286

**Վալերի Թունյան, Արա Հովհաննիսյան. «ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԻՆՍՏԻՏՈՒՄՆԵՐ, ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ», ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂԿԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ / ԿԱԶՄՈՂ Է. ՄԻՆԱՍՅԱՆ /, Ե., ԵՊՅ ՀՐԱՏ., 2020, 212 ԷԶ** ..... 288

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ** ..... 290

**INFORMATION ABOUT THE AUTHORS** ..... 292

**Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ** ..... 294

**NOTICE FOR THE AUTHORS** ..... 294

**Հովիկ Գրիգորյան  
Հայկ Մխոյան**

**ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԵՎ ԼԵՈՅԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ<sup>1</sup>**

***Հիմնաբառեր.** Դավիթ Անանուն, Լեո, նամակներ, հայոց պատմություն, Ղարաբաղ, կյուրթական դրություն, մտավորականություն:*

Հրապարակվող նամակները պատկանում են XX դ. առաջին տասնամյակներին հասարակական-քաղաքական ու գիտական եռանդուն գործունեություն ծավալած և տարբեր սերունդներ ներկայացնող երկու նշանավոր մտավորականների՝ Լեոյի [Առաքել Բաբախանյան (1860-1932)] և Դավիթ Անանունի [Դավիթ Տեր-Դանիելյան (1880-1943)] գրչին: Որոշակի ընդհանրություններ ունեցող և ժամանակի հայ պատմագիտական մտքի զարգացման վրա նկատելի ազդեցություն ունեցած երկու գործիչների նամակներն ուշագրավ են ինչպես նշված պատմաչրջանում ապրող պատմաբանների մասնագիտական գործունեության պայմանները և հայ պատմագիտական մտքի վրա դրանց թողած ազդեցությունը վերհանելու, այնպես էլ՝ ժամանակի հայ հասարակական-քաղաքական կյանքի վերաբերյալ մեր պատկերացումներն ընդլայնելու տեսանկյունից:

Լեոն և Դ. Անանունը ունեցել են քաղաքական տարբեր հայացքներ և, որպես կանոն, պատկանել են քաղաքական տարբեր ճամբարների<sup>2</sup>: Բայց դա ամենևին չի խանգարել, որ ժամանակի ընթացքում նրանց միջև հաստատվեն նախ փոխադարձ հարգանք, ապա՝ նաև ջերմ հարաբերություններ: Նրանց մերձեցման հարցում իրենց դերն են խաղացել համերկրացի՝ արցախցի լինելու հանգամանքը և զբաղմունքի, մասնագիտության ընդհանրությունը: Երկուսն էլ ավարտել են Շուշիի քաղաքային դպրոցը և, հնարավորություն չունենալով շարունակելու ուսումը, իրենց մասնագիտական որակավորման բարձրացումն ու հետագա ճանապարհը հարթել են ինքնակրթությամբ՝ հասնելով մեծ հաջողությունների:

Լինելով տաղանդավոր հեղինակներ, թե՛ Լեոն, թե՛ Դ. Անանունը պատմագիտությունից զատ զբաղվել են նաև հրապարակախոսությամբ, մշակութային և այլ խնդիրներով, ինչն արտացոլվել է նրանց նամակներում: Հաջորդաբար ընտրվելով Ղարաբաղի հայրենակցական միության ղեկավար՝ նրանք մեծ հոգատարություն են ցուցաբերել իրենց փոքր հայրենիքի՝ Ղարաբաղի նկատմամբ, անկեղծորեն մտահոգվել վերջինիս ճակատագրով: Այդ առումով արժեքավոր է Լեոյի՝ Արցախում 1919 թ. ամռանը տեղի ունեցած դեպքերը նկարագրող նամակը:

Տարբեր պատմափուլերում գրված ուսումնասիրությունների ստեղծման հանգամանքները պարզաբանելու և պատմագիտական մտքի վայրիվերումների տրամաբանությունն ընկալելու առումով կարևոր է ոչ միայն տվյալ ժամանակի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական ու մշակութային գործընթացների իմացությունը և դրանք ներկայացնելը, այլև նույն պայմաններում ապրող և ստեղծագործող պատմաբանների սոցիալ-տնտեսական վիճակի, գործունեության միջավայրի, կուսակցական-քաղաքական համակրանքների, հոգեբանական

\* Հոդվածը ներկայացվել է 25.05.2020 թ., գրախոսվել՝ 08.06.2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.06.2020 թ.:  
<sup>1</sup> Աշխատանքը պատրաստվել է ՀՀ ԿԳՆ ԳԿ 18Տ-6Ա160 ծածկագրով «Դավիթ Անանունի կյանքը և պատմագիտական ժառանգությունը» գիտական թեմայի շրջանակներում:  
<sup>2</sup> Հայտնի է, որ Լեոն մինչև 1910-ական թթ. սկիզբը Հայ հեղափոխական դաշնակցությանը մոտ կանգնած գործիչ է եղել, ապա հարել է ավատականներին և 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո անդամակցել Նորաստեղծ Հայ ժողովրդական կուսակցությանը: 1920-ական թթ. ինչ-որ առումով սկսել է աշխատել, գրել բոլշևիկյան իշխանությունների համար ու սպասարկել նրանց շահերը, թեև այդ շրջանում նրա իրական համոզմունքների վերաբերյալ դժվար է պնդումներ անել: Դ. Անանուն, ի տարբերություն Լեոյի, դաշնակցական է եղել իր գործունեության վաղ շրջանում (թերևս մինչև 1903 թ. մայիս): XX դարասկզբին արդեն սոցիալ-դեմոկրատ Դ. Անանունը կարճ ժամանակով անդամագրվել է Հնչակյան կուսակցությանը, ապա՝ Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կապակերպությանը (ՄԴԲՀ-ն հայտնի է նաև Սպեցիֆիկներ անվամբ) և մինչև վերջ հավատարիմ մնացել վերջինիս գաղափարներին: Այսինքն՝ կուսակցական պատկանելության, քաղաքական հայացքների և գաղափարախոսական տեսանկյունից Դ. Անանունը և Լեոն մոտ չեն եղել, թեև որոշ փուլերում ՀՀԴ-ին ընդդիմադիր լինելը կարող էր մերձեցնել նրանց:



նկարագրի բացահայտումը: Վերջին հանգամանքները մեր օրերում կարող են էապես բարձրացնել պատմագրական հետազոտությունների արժեքը, նպաստել պատմագիտության զարգացմանը: Հրապարակվող նամակներն այդ առումով թույլ են տալիս պարզաբանել հատկապես Լեոյի մասնագիտական գործունեության հետ կապված առօրյան:

Դրանք որոշակի արժեք են ներկայացնում նշված ժամանակահատվածի ընդհանուր հասարակական-քաղաքական կյանքի, մթնոլորտի վերաբերյալ պատկերացում կազմելու տեսանկյունից: Նաև թույլ են տալիս վերհանել քաղաքական բարդ իրավիճակի և սոցիալ-տնտեսական ծանր պայմանների ազդեցությամբ Լեոյի մոտ առաջացած հուսահատական վիճակը, իշխող ՀՅԴ կուսակցությունից, ինչ-որ տեղ՝ ամբողջ հայ հանրությունից երբեմն արդարացի դառնացածությունը, բայց մի շարք դեպքերում նաև՝ չհիմնավորված չարացածությունը, Հայաստանի նորաստեղծ հանրապետությունից նրա կտրվածությունը և վերջինիս առջև կանգնած սոցիալ-տնտեսական մարտահրավերներն ամբողջ խորությամբ չընկալելը: Կարծում ենք, այդ հանգամանքները նկատելի ազդեցություն են ունեցել նրա հայացքների հետագա եվոլյուցիայի վրա: Դրանք միանշանակ նպաստել են, որ նա խորհրդային տարիներին վերաբժանորի անցյալում իր դավանած գաղափարները, լծվի իրեն աշխատելու, վաստակելու և հրատարակվելու հնարավորություն ընձեռած բուլչեիկյան իշխանության շահերի պաշտպանության գործին՝ քննադատի, վատաբանի և սևացնի հայոց պատմության վերկուսակցական, երկարաժամկետ նշանակություն ունեցող գործընթացները, արժեքներն ու գործիչներին:

Նամակները հետաքրքրություն են ներկայացնում նաև այն առումով, որ թույլ են տալիս վերհանել պատմագիտական տարբեր ուղղություններ ներկայացնող և տարբեր սերունդների պատկանող երկու գործիչների միջև ձևավորված՝ վստահության ու փոխադարձ հարգանքի վրա հիմնված հարաբերությունների որոշ ծալքեր: Մի կողմից առկա է անհամեմատ երիտասարդ Դ. Անանունի հարգալից, ուշադիր վերաբերմունքն անվանի, բայց բարոյական ու սոցիալ-տնտեսական լուրջ աջակցության կարիք ունեցող Լեոյի նկատմամբ և վերջինիս ամեն կերպ աջակցելու ձգտումը: Մյուս կողմից՝ նամակից նամակ նկատելի է այն մեծ վստահությունը, որ տածում էր Լեոն իր գրչակցի նկատմամբ: «Դավիթ, Դավիթ, հանցանք ես գործում՝ թաքցնելով այդպիսի մի շքեղ գրիչ», – նամակներից մեկում հնչած այս կարծիքը, համոզված ենք, Լեոյի կողմից Դ. Անանունին, նաև որպես պատմաբանի, տրված բարձր գնահատականի վկայությունն է:

Տպագրվող ութ նամակներից հինգը հրապարակվում են առաջին անգամ: Երկուսը նախկինում հրապարակվել են հատվածաբար<sup>1</sup>, մեկը՝ ամբողջական<sup>2</sup>: Նամակների խոսակցական, տեղ-տեղ արցախյան երանգներով բարբառային լեզվից հնարավորինս վերափոխվել են ժամանակակից հայերենի, կատարվել են ուղղագրական ու կետադրական որոշ փոփոխություններ:

\*\*\*

<sup>1</sup> Տե՛ս Աբրահամյան Հ., Հայ գրողների նամակները Դավիթ Անանունին, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2001, № 2, էջ 206-207:

<sup>2</sup> Տե՛ս Ավնավուրյան Գ., Դավիթ Անանունի նամակագրությունից, «Պատմաբանասիրական հանդես», 1984, № 1, էջ 172-173:

**Դ. Անանունը Լեոյին**

**ԳԱԹ, Լեոյի ֆոնդ, վավ. 43, թ. 1-3:**

**Բագու, 8-ին փետրվարի 1915 թ.**

Մեծարգո բարեկամ  
Պ. Լեո

Իր ժամանակին Ձեր նամակը և հոգվածը ստացել եմ: Մեր խմբագրական հանձնաժողովը չափազանց գոհ մնաց Ձեր հոգվածից, սակայն մինչև օրս մեզ չհաջողվեց բացառիկ թերթի հրատարակումը: Պետք է հաղթահարել մի շարք ձևական դժվարություններ: Թույլտվության խնդիրը անվերջ ուշանում է տեղական տիմար գրաքննիչի ձգձգումների պատճառով: Համոզված ենք, որ մեզ վերջիվերջո պիտի հաջողվի թերթի հրատարակումը: Համենայն դեպս, եթե նոր թույլտվության իրավունք անկարելի եղավ ստանալ՝ պիտի օգտագործենք մի հին թույլտվության իրավունք, որը մեր համախոհին չի պատկանում: Հարկավ, բացառիկ թերթի N-ը Ձեզ կուղարկվի: Իմ և ընկերների կողմից շնորհակալություն եմ հայտնում Ձեր սիրալիր վերաբերմունքի համար:

Մեծարգո բարեկամ, Ձեր նամակը ինձ չափազանց վշտացրեց: Առանց այն էլ ինձ հայտնի էր, որ հայ գրողը միշտ էլ նեղ վիճակի մեջ է լինում: Ենթադրում էի, որ Ձեր վիճակը չէր կարող բացառություն կազմել, մանավանդ որ այժմ դուք շնորհիվ անցուկ-մոռանցուկ մարդկանց քաջագործությունների (*հեղինակի կողմից ջնջված բառ*) կապ չունեք որևէ հայ հրատարակության հետ: Այո՛, Ձեր նամակի մեջ հայտնած ցանկությունը սպասելի էր. չէ որ և մեր ծերունազարդ պատմագիր Երիցյանը<sup>1</sup> նույնպես ստիպված էր վաճառքի հանել իր գրադարանը: Իմ ուղեղում չի կարողանում տեղավորվել այդ միտքը, որ գրողը կարող է զրկված լինել իր սեփական գրադարանից: Ձեր նամակից հետո ես իմ աննշան սոցիալական դրությամբ կամեցա այլ կերպ նպաստել գործին, այն է հրատարակիչ գտնել Ձեր աշխատասիրած հայոց պատմությանը: Այդ իմաստով դիմեցի նախ և առաջ Միրզա Սարուխանյանի գործերի կառավարիչ պ. Համազասպ Տեր-Առաքելյանցին (նա, որ թարգմանություններ է անում թուրքերենից, Հզոր-Քեշիշյան ստորագրությամբ) և առաջարկեցի նրան խոսել Միրզայի հետ և համաձայնեցնել նրան իր վրա վերցնելու հրատարակության ծախսերը: Նա սկզբունքով ոչինչ չունեի իմ առաջարկի դեմ, սակայն ասաց, որ ներկա պայմաններում, երբ Մ. Ս. խոշոր նվիրաբերություններ է արել՝ հավանորեն կիրառարվի և չի ընդունի մեր խնդիրքը: Նրա կարծիքով պետք է սպասել մինչև որ վերջանա պատերազմը իր պատճառած աղետներով: Այս անհաջողությունից հետո ես մի նոր դիմում արի: Դա իմ բարեկամ Պողոս Կարա-Մուրզային էր: Նրա աներոջ որդին ինժ. Հովհ. Ամիրյանցը (մոսկվաբնակ) այժմ չափազանց հարուստ մարդ է: Ես նրան ծանոթ եմ և հիշում եմ, որ այդ անձը ջահել ժամանակ սեր ուներ դեպի հայ գիրքը: Կարա-Մուրզային առաջարկեցի, որ թե ինքը և թե իր կինը իրանց կողմից դիմում անեն Ամիրյանցին և առաջարկեն հրատարակելու Ձեր աշխատությունը: Այստեղ իմ առաջարկությունն ու դիմումը հանդիպեց սիրալիր վերաբերմունքի: Նրանք նամակ գրել են Մոսկվա և սպասում են Ամիրյանցի պատասխանին: Այդ պարունը միառժամանակ բացակայել է Մոսկվայից, բայց այժմ այնտեղ է: Կարա-Մուրզան կարծում է, որ գուցե թե իր խնդիրքը չմերժվի: Եվ եթե մերժում եղավ, ապա դա պիտի պատճառաբանվի դարձյալ պատերազմի պատճառած ծախսերով: Ես համենայն դեպս պիտի աշխատեմ այս ուղղությամբ և մեղքը իմը չպիտի լինի, եթե հայ ունևորները քարսիրտ լինեն հայ պատմության և գրականության դիմաց:

Մի՞թե կարիք կա կրկնելու, որ ինձ համար հասարակական հանցանք է թվում այն, որ հայ ազգը հանդուրժում է Ձեր ականա լռությունը: Ե՛լ որ ապագայի մասին է հուզվում այդ ազգը, եթե այսօր պիտի լռի նրա վաստակավոր գրողը:

<sup>1</sup> Խոսքը վերաբերում է հայտնի պատմաբան Ալեքսանդր Երիցյանին (1841-1902 թթ.):

Ինձ և իմ համախոհներին հայտնել են, որ Թիֆլիսում հայկական ներկայացուցիչների համագումար պիտի լինի: Մեր կողմից բժ. Լ. Աթաբեկյանը՝ Թիֆլիսում գտնված ժամանակ՝ հարաբերության մեջ է մտել Մեսրոպյա եպ.<sup>1</sup> հետ, առաջարկելով, որ այդ համագումարին հրավիրվեն նաև մեր երկու ներկայացուցիչները: Ինչպես գրում է մեզ Լ. Աթ. (Լ. Աթաբեկյանը-Յ.Գ., Յ. Մ.) այդ առաջարկը չի մերժվել: Այժմ մենք լիազորել ենք ներկայացուցիչներ լինելու Լ. Աթաբեկյանին և բժ. Տիգրան Իսախանյանին<sup>2</sup>: Եթե վերջինս անկարող եղավ գալ Թիֆլիս, ապա նրան կփոխարինի մի ուրիշը: Որքան գիտեմ, դուք Ազգային Բյուրոյի անդամ եք և եթե համագումարում հարց ծագի մեր ներկայացուցիչների մանդատների մասին, ապա բարի եղեք հոգուտ մերոնց արտահայտվելու: Ձեզ հայտնի պիտի լինի, որ Բազմի տեղական մարմինը մերժեց իր մեջ ընդունելու մեր ներկայացուցիչներին և այդ պատճառով մենք հիմա չենք մասնակցում պատգամավորների ընտրությանը: Բազմի մարմնի ուզուրպատորական ընթացքի մասին երևի մերոնք կխոսեն համագումարում:

Ընդունեցեք ջերմ ողջույններս  
Ձեր Դ. Տեր-Դանիելյանից

2

**ԳԱԹ, Դ. Անանունի ֆոնդ, վավ. 52, թ. 1-2:**

**Թիֆլիս, մայիսի 9, 1915**

Չարգելի բարեկամ պ. Դավիթ

Ստացա Ձեր նամակը: Չափազանց շնորհակալ եմ Ձեր բարեկամական արտահայտությունների համար: Այսօր էլ դեռ չի վերացել մղձավանջը և դեռ իմ վեպի գործը շուտով մի սկանդալի դուռ էլ բաց կանի դատարանում: Այս դրության մեջ կարող եք իմանալ ո՞րքան ինձ համար քաջալերիչ պիտի լինեն իմ բարեկամների համակրանքները: «Չորիզոնի»<sup>3</sup> վարմունքը դուք շատ ճիշտ եք ըմբռնել: Բացի այդ հանգամանքից, կա և այն, որ Արշակ Ղազարյանը<sup>4</sup> հին հաշիվներ ունի ինձ հետ, Արասխանյանցի<sup>5</sup> «Մուրճի» ժամանակից: Երևույթի հրեշավորությունն այն է, որ ես դեռ «Չորիզոնի» սեփականատերերից մեկն եմ համարվում. երբ Չամբարձում Մելիքյանը եկավ ընկերություն հիմնելու «Չորիզոնի» համար, ես ունեի ստանալու այդ լրագրից մոտ 700 ռուբլի: Այդ գումարից ինձ տվին միայն 200 ռուբլի, զոռով գլխիս կապեցին «Չորիզոնի» ընկերության փայտերից երկուսը (200 ռուբլով), իսկ մնացած 300 ռուբլին դեռ այսօր էլ մնում է իմբազրության վրա...

<sup>1</sup> Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյան (1865-1939 թթ.): 1913-1916 թթ. եղել է Վրաստանի և Իմերեթիայի, 1917 թ.՝ Աստրախանի, 1922-1932 թթ.՝ Պարսկա-Յնդկաստանի թեմի թեմական առաջնորդ: 1919 թ. հրավիրվել է Հայաստանի նորաբաց համալսարան՝ որպես հայ գրականության և կրոնական մատենագրության առարկաների պրոֆեսոր, եղել է պատմալեզվաբանական ֆակուլտետի առաջին ղեկավարը:

<sup>2</sup> Տ. Իսախանյանը ՍԴԲԿ (սպեցիֆիկների) կուսակցության հիմնադիրներից և եռանդուն գործիչներից մեկն էր: Ծննդյան և մահվան թվերը հայտնի չեն:

<sup>3</sup> «Չորիզոն»-ը ՀՀԴ-ի կողմից 1909-1918 թթ. Թիֆլիսում հրատարակված հասարակական, գրական, քաղաքական օրաթերթ էր: Իմբազիր-հրատարակիչների թվում են եղել նաև Յ. Թումանյանը, Ն. Աղբալյանը, Լեոն, Ա. Չամբարյանը, Ա. Սահակյանը, Վ. Նավասարդյանը, Ս. Վրացյանը, Բ. Նուրայանը, Մ. Վարանդյանը:

<sup>4</sup> Խոսքը ՀՀԴ հայտնի գործիչ բժիշկ Արշակ Ղազարյանի մասին է, որը Հայաստանի խորհրդայնացումից հետո հաստատվել է Պարսկաստանում և, ինչպես Հովհաննես Զաքալանյանին, համարվում է հայկական սմենովեթականության ներկայացուցիչներից մեկը:

<sup>5</sup> Ավետիք Արասխանյանը (1857-1912 թթ.) հայ մամուլի և տնտեսագիտական մտքի նշանավոր ներկայացուցիչներից է: Երեք կիսամյակ ուսանել է Լայպցիգի համալսարանում: 1882 թ. ավարտել է Ստրասբուրգի համալսարանը՝ հաջողությամբ հանձնելով դոկտորական քննությունը: Ընդհանուր պատմություն է դասավանդել Թիֆլիսի Ներսիսյան և Գայանյան դպրոցներում: 1889 թ. հունվարից մինչև 1900 թ. հունիս ամիսը հրատարակել է «Մուրճ» հանդեսը: 1909-1911 թթ. քաղաքատնտեսություն և ընդհանուր պատմություն է դասավանդել Ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանում:

Որտեղ, ասացեք, կարելի է գտնել այսքան սև ապերախտություն. կարո՞ղ եք ցույց տալ մի ուրիշին, որ ինձ հետ զուգակից լինի մի այսպիսի բախտի մեջ: Ես դեռ մի կողմ եմ թողնում թե տարիների ընթացքում ինչեր եմ քաշել այդ թերթը պահելու համար: Իմ բախտից մի ուրիշ օրինակ: Այստեղ աշխատակցում էի «Кавказ. слово»-ին<sup>1</sup> և ստանում էի լավ տողավարձ: Խնդրեցին հանձնարարել մի մարդու, որ կարողանար տանել հայկական բաժինը. ես տվի փաստաթան Օ. Պոպովյանի անունը. նա հրավիրվեց խմբագրատուն, բայց հենց առաջին գործը դարձրեց ինձ թերթից վտարելը: Անասունն էլ այնքան երախտամոռ չէ լինում, ինչպես մարդ անվանվածը...:

Ի դեպ, «Հորիզոնի» և հորիզոնականների կատաղությունն ինձ դեմ հիմք ունի և այն, որ ես եմ պատճառը, որ Ղազար Տեր-Ղազարյանը<sup>2</sup> տեսուչ է Շուշում և հավաքել է իր շուրջը մեր երիտասարդության մի գունավորումը, որ հավաճված էր ամեն տեղից: Բայց տեսա՞ք Շուշում «Փայլակն» էլ ինձ աթաղի տվեց:– Է՛հ, հարգելի բարեկամ, ինձ սպանում են, կատարելապես սպանում: Մի՞թե այնքան անպետք եմ եղել ես կյանքիս մեջ, որ այդքան շտապում կա կտրել հիվանդոտ կյանքիս թելը...

Իմ շնորհակալությունները և բարևները հայտնեցեք, ինդրեմ, պ. Կարա-Մուրզային: Ես չափազանց հոռատես եմ և այդ հարցի վերաբերմամբ, բայց շնորհակալ եմ այն բարության համար, որ ցույց է տվել իմ վերաբերմամբ հարգելի պ. Կարա-Մուրզան:

Շուտով կուղարկեմ ձեզ իմ նոր աշխատությունները:

Ընդունեցեք իմ սիրալիր ողջույնները  
Ձեր Ա. Բաբախանյան

3

**ԳԱԹ, Դ. Անանունի ֆոնդ, վավ. 53, թ. 3-5:**

**Թիֆլիս, հունիսի 18, 1919**

Սիրելի Դավիթ

Օգտվում եմ առիթից, որ մեր երեխաները գալիս են Երևան և գրում եմ քեզ այն տխուր նորությունները, որոնք ստացվել են այստեղ մեր խեղճ հայրենիքից՝ թո գնալուց հետո:

Տեղս է հասել Հրանտ Բահաթյանը<sup>3</sup>, որ երեկ զեկուցում տվեց մեր Հայրենակցական Միության[ը]: Տպավորությունը ճնշիչ, մղձավանջային էր: Շատելվորտը, վերջապես, հաջողացրել է դժբախտ Շուշում և նրա հետ մի երկու գյուղի (Քարինտակ, Շոշա) հպատակությունը կորզել և մատուցել պանիսլամության բորենի Սուլթանովին: Բայց ի՞նչ գնով:– Ահա: Իշխանյանի<sup>4</sup>,

<sup>1</sup> «Кавказское слово»-ն Թիֆլիսի հրատարակչական ընկերության կողմից՝ հայ բուրժուական շրջանակների ջանքերով՝ 1914 թ. սեպտեմբերի 16-ից մինչև 1918 թ. դեկտեմբերի 17 (4)-ը հրատարակվող ռուսալեզու օրաթերթ էր: Փակվել է Կրաստանի մենշևիկյան կառավարության կողմից՝ Հայ-վրացական պատերազմի օրերին: Թերթի խմբագիրներն են եղել՝ Յու. Ֆ. Սեմյոնովը (1914-1916 թթ.), Ի. Մ. Դյուրխանովը (1916-1917 թթ.) և Վ. Ս. Անանովը:

<sup>2</sup> Ղազար Տեր-Ղազարյանը (1874-1958 թթ.) ՍԴԲԿ հիմնադիրներից է: Որպես վերջինիս ներկայացուցիչ մասնակցել է ՌՍԴԿԿ Լոնդոնի 5-րդ համագումարին, որտեղ ՍԴԲԿ-ի և ՌՍԴԿԿ-ի միավորման վերաբերյալ որոշում է կայացվել: Մասնագիտությամբ քիմիկոս էր, սովորել է ժնևի համալսարանում, 1906 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, դարձել ժնևի համալսարանի դասախոս: Հետագայում դասավանդել է Լոպանում, Շուշում (1913-1915 թթ. թեմական դպրոցի տեսուչն էր), Թիֆլիսի Անդրկովկասյան համալսարանում: 1934 թ. գալով Երևան, դարձել է ԵՊՀ-ի նորաստեղծ քիմիական ֆակուլտետի առաջին դեկանը և անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչը: Եկատելի դերակատարություն է ունեցել ՀԽՍՐ-ում քիմիական արդյունաբերության վարչազման գործում:

<sup>3</sup> Հ. Բահաթյանը արցախցի գործիչ է: 1919 թ. փետրվարի 10-20-ը Շուշում տեղի ունեցած արցախահայերի չորրորդ համագումարում նա և Ե. Իշխանյանն ընտրվել են Ղարաբաղի հայոց ազգային խորհրդի փոխնախագահներ:

<sup>4</sup> Եղիշե Իշխանյանը (1886-1975 թթ.) արցախցի ազգային, հասարակական և պետական գործիչներից է: Սովորել է Պետերբուրգի գյուղատնտեսական բարձրագույն վարժարանում: 1917 թ. դեկտեմբերին ընտրվել է Շուշիի միջկուսակցական բյուրոյի փոխնախագահ: 1918 թ. հուլիսին արցախահայերի առաջին համագումարում ընտրվել է Ղարաբաղի ժողովրդական կառավարության նախագահ: Ղարաբաղի հայոց ազգային խորհրդի դեկավարներից էր: Դեմ

Թումեանի<sup>1</sup> և Ավետիսյանի<sup>2</sup> հեռացած օրը թաթարական հրացանաձգությունը սաստկանում է: Թուրքերը գրոհ չեն տալիս, հարձակում չեն գործալ, բայց ահագին քանակությամբ դում-դում գնդակներ են տեղում հայոց թաղերի վրա: Հունիսի 4-ի երեկոն մթնում է, նրա հետ և սարսափն է մտնում Շուշու մեջ: Հրացանաձգությունը հասնում է կատաղի չափերի: Հարձակում դարձյալ չկա: Վաթեռլոյի հաղթողների ծրագիրն էր այս, անշուշտ – սոսկում տարածել հայերի մեջ: Միաժամանակ, հունիսի 4-ի երեկոյան, թուրքերը, հավանաբար խանթենդուց եկած ադրբեջանցիները, վառում են Ղայբալի շենը և սկսում կոտորածը: Շուշու վերի թաղը, որի աչքերի առջև էր կատարվում Ղայբալուի կործանումը, մատնվում է խուճապի: Հազարավոր կանայք վերցնում են իրենց երեխաներին և վազում են անգլիական միսիան, արտասուքով աղաչում են որ իրենց հենց այդտեղ կոտորեն անգլիական զինվորները, բայց ոչ թուրքերը: Խորամանկ Ալբիոնը, ինչ ասել կուզի, լռություն է պահպանում և դժբախտ կանանց բազմությունը մտում է փողոցում թափված: Միաժամանակ մի բազմություն հավաքվում է Հովանանց վանքի<sup>3</sup> բակում, ուր հայոց շտաբն է եղել և կենդանական ահուդողից բռնված՝ պահանջում է, որ Ազգային խորհրդի կողմից մարդ գնա Սուլթանովի մոտ և հպատակություն հայտնի Ադրբեջանին: Եվ երբ ոչ ոք հանձն չէ առնում այդպիսի մի բան անել, սարսափահար ամբոխը, ղեկավարությամբ, անշուշտ, այն խմբակի, որ թեզ լավ ծանոթ է, երկու մարդ է ընտրում իր միջից և ուղարկում է Սուլթանովի մոտ, որ ընդունում է նրանց բորենու ժպիտներով, ուրախություն է հայտնում Շուշու հպատակության համար, ասում է, որ ինքը գիտեր, որ մի քանի մարդիկ են խռովում հանգստությունը, խոստանում է հաց ու ապրանք տալ և այլն: Մյուս օրը նա գնում է առաջնորդի մոտ և դարձյալ մեծ բազմություն է հավաքվում, որ մի մասնաժողով է ընտրում ադրբեջանական կարգերն ընդունելու համար: Սուլթանովը նորից խոսում է, իրան անմեղ գառնուկ է ձևացնում, բայց ասում է և հետևյալը. «Անգլիացիներին մի՛ հավատացեք, նրանք մեզ էլ են խաբում, ձեզ էլ»: Իրար արժանի են Սուլթանովը և Շատելվորտը: Մի քանի ժամից հետո այդ իսկ անգլիացիները 400 ադրբեջանական զորքեր տանում են (սիփայների հովանավորությամբ) բնակեցնում վերի զորանոցում: Արդեն ոստիկանական պաշտոնյաների ուսնոցները կանաչ գույնի են: Եվ փա՛ռք հավիտյանս Մեծ Բրիտանիային:

Քաղաքն այդպես կորավ, սիրելի Դավիթ: Ես չեմ գարմանում, որովհետև գիտեմ թե ինչ է այդ քաղաքը, շարունակ հարվածել եմ նրան իմ գրվածքների մեջ: Շուշին անձնատուր է եղել սարսափի տակ. հրացանաձգությունը մի «դեմոնստրացիա» է եղել, ինչպես բացատրել են անգլիացիները: Եվ այդքանն էլ բավական է եղել, որ ամբոխը «գթություն» ոռնա: Քաղաքի ինտելիգենտ, ընդդիմադիր, ռազմիկ ուժերը հեռացած են, ինչ պետք էր սպասել գյուղացիներից...

Մտում են գյուղերը: Օսմանյան արշավի կերպարանքն է և այսօր: Շուշին մի քանի գյուղերով հպատակ, մնացած գյուղերը դիմադրում են: Այսօր արդեն ռազմաճակատ կա, ինսածախը հետ է մղել թուրքերին և քրդերին. Քյաթուկը կրակ է բացել Ասկերանի պահակի դեմ: Դաշուշենը ջարդ

*լինելով Արցախի Ադրբեջանին ենթարկելու բրիտանական քաղաքականությանը, 1919 թ. հունիսին բրիտանական իշխանությունների կողմից վտարվել է Շուշից: Պաշտոններ է վարել Առաջին հանրապետությունում: Կյանքի վերջին տասնամյակներն անցկացրել է վտարանդիության մեջ: 1966 թ. Նյու-Յորքում գրել է «Լեռնային Ղարաբաղ (1917-1920)» հուշագրությունը:*

<sup>1</sup> Հարություն Թումյանը (1889 թ. - մահվան թիվն անհայտ) արցախցի ռազմա-քաղաքական գործիչ է՝ հայոց ապստամարտի նվիրյալ Թուման Թումյանի (Թորգոմ) եղբայրը: Ավարտել է Պետերբուրգի Բարձրագույն առևտրական գիտելիքների ինստիտուտը, ապա՝ մի քանի տարի ուսանել Կիևի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետում: 1917 թ. դեկտեմբերին ընտրվել է Շուշիի միջկուսակցական բյուրոյի անդամ, 1918 թ. հուլիսին՝ Ղարաբաղի ժողովրդական կառավարության անդամ՝ Կինվորական գործերի կառավարիչ: Դեմ լինելով Արցախի Ադրբեջանին ենթարկելու բրիտանական քաղաքականությանը, 1919 թ. հունիսին բրիտանական իշխանությունների կողմից վտարվել է Շուշից: Կյանքի վերջին տասնամյակներն անցկացրել է ՀԽՍՀ-ում, զբաղվել լրագրողական, գիտամշակութային և դասախոսական աշխատանքով: 1950-ական թթ. կեսերին գրված նրա հուշերը, որը 2008 թ. հրատարակվել է «Դեպքերը Լեռնային Ղարաբաղում (1917-1920 թթ.)» խորագրով:

<sup>2</sup> Աստատուր Ավետիսյանը արցախցի հասարակական-քաղաքական գործիչ է: 1917 թ. դեկտեմբերին ընտրվել է Շուշիի միջկուսակցական բյուրոյի անդամ, իսկ 1918 թ. ապրիլին՝ Կոմիսարների խորհրդի պարենավորման կոմիսար: Ծննդյան և մահվան թվերն անհայտ են:

<sup>3</sup> Խոսքը Շուշիի հյուսիսային հատվածում գտնվող Սուրբ Հովհաննես Սկրտիչ եկեղեցու մասին է, որը հայտնի է Կանաչ ժամ անունով:

Ե տվել այն ոհմակին, որ գնացել էր նրան էլ, Ղայբալուի նման, ավերելու: Վարանդայի շրջանն արդեն հայտարարել է, թե ինքը նորից կրկնում է, որ Ադրբեջան չի ընդունում: Մյուս գավառների վճիռը դեռ հայտնի չէ: Բաքվից մի անգլիական օֆիցեր է եղել եկած Շուշի՝ քննություն կատարելու համար: Սուլթանովը հայերին պահանջ է եղել դրած որ յուրաքանչյուր գյուղ ներկայացուցիչ ուղարկի իր մոտ և հայտնի՝ հպատակվո՞ւմ է թե չէ: Անգլիական օֆիցերը համաձայնություն է եղել տված այդ մտքին: Բայց հայերը կարողացել են համոզել նրան որ ավելի լավ է նորից գյուղերի համագումար հրավիրել: Արդյոք ի՞նչ կվճռի այս նոր համագումարը: Շուշին և Ղայբալին կսարսափեցնե՞ն նրան... Կա և այն հանգամանքը, որ անգլիական օֆիցերը կիսապաշտոնական կերպով հաղորդել է, թե Սուլթանովը հեռացվում է և արդեն տարել է այդ սրիկային Բագու: Ասում են որ անգլիական հրամանատարության տրամադրությունը փոխվել է դեմ, բայց ես այդ բաներին չեմ հավատում, իսկ Սուլթանովի տեղ կուղարկվի անտարակույս մի ավելի վատ օսմանյան արբանյակ: Դրությունն ինձ վատ գույներով է ներկայանում: Ղարաբաղի գյուղացիությունը դիմադրական տրամադրություն ունի, բայց միջոցները շատ զորավոր չեն, դրսից էլ օգնություն չկա: Նախատեսել կարելի է և ուրիշ Ղայբալուներ: Անգլիական ամբողջ աշխարհասասան ուժի հովանու տակ դրած Ադրբեջանը, ունենալով այնպիսի մի դաշնակից, ինչպիսին է մարքսիստական Կրաստանը, պիտի Թուրքիայի դերը կատարի մեր վերաբերմամբ: Երևի բրիտանական [թախտի] ճակատին գրված է միշտ հովանավոր լինել մի հայասպան մոնոպոլիային: Մի ժամանակ Աբդուլ-Յամիդն էր, այժմ էլ Ռասուլ-Չադեն<sup>1</sup> է, այդ տիպիկ մոնոպոլ, որ Տրապիզոնում ինձ բացատրում էր, թե ինչպես պիտի միանա թրքությունը Փոքր Ասիայից մինչև Սամարղանդ:

Երևանի ցույցը շատ հուզիչ էր: Բայց ես անձամբ քիչ եմ համարում այդքանը: Մենք պետք է որոտաձայն հայտնենք ամբողջ աշխարհին, որ 620 կանանց և երեխաների արյունն ընկնում է գեն. Թոմսոնի և Շատելվորտի գլխին: Կիրակի օրն էլ մենք միտինգ ունինք: Եվ երբ ես երեկ ժողովում հայտնեցի այս միտքը, ամենքը, նույնիսկ սոցիալիստ-հեղափոխական Սաթո Սահակյանը, գտան որ պետք է դիպլոմատ լինել, որ թարգմանի [Շատելվորտի?]: Բայց ես պատմաբան եմ. իմ առջև կան մարդիկ և գործեր: Եվ երբ գործերը մարդկանց համար այս կամ այն դատավճիռն են հանում, ես առանց մի թույլ վարանելու, դրոշմում եմ մարդու ճակատին նրան արժանի դատավճիռը: Եվրոպայում ես տեսել եմ այն ռեդիկոնտը և ցիլինդրը, որ հագնում էին մեր դիպլոմատները 30 տարուց ի վեր՝ Յայոց հարցը լուծելու համար: Ով ասես որ չէ հագել այդ ռեդիկոնտը.– և՛ Քրիստափոր Միքայելյանը, և՛ Միքայել Վարանդյանը, և՛ Ահարոնյանը: Այժմյան մեր դիմումները Թոմսոնին, Շատելվորտին և նման մյուս սրիկաներին ինձ հիշեցնում են այդ ռեդիկոնտն ու ցիլինդրը, և ես զգվում եմ:

Սիրալիբ բարևներով՝ քո Ա. Բաբախանյան

4

**ԳԱԹ, Դ. Անանունի ֆոնդ, վավ. 54, թ. 5-8:**

**Թիֆլիս, փետրվարի 2, 1920**

Սիրելի Դավիթ

Վաղուց ուզում էի նամակ գրել քեզ, բայց որովհետև որոշած ունեի կողմնակի ոչ մի գրագրություն չունենալ մինչև որ կվերջացնեմ «Յայոց պատմության» երրորդ հատորը, ուստի

<sup>1</sup> Մամեդ Էմին Ռասուլչադեն (1884-1955 թթ.) իսլամական սոցիալ-ժողովրդավարական «Ղումմեթ» կապմակերպության հիմնադիրներից է (1904 թ.): 1913 թ. հիմնադրել է «Մուսավաթ» («Յավասարություն») կուսակցությունը: Եղել է Ադրբեջանի 1918-1920 թթ. հանրապետության անկախությունը հռչակած Ադրբեջանական Ավգային խորհրդի նախագահը: Իր աշխատություններում քարոզել է թուրքերի բացառիկությունը: Վարել է ընդգծված հակահայ քաղաքականություն:

բացառություն չարի և քեզ համար: Երեք օր առաջ բոլորովին վերջացրի այդ հատորը, մի վիթխարի գործ, որի վրա ես ինքս էլ զարմացած եմ (1806 երես, գրելու թղթի վրա, երեսը 35 տողից): Եվ ահա այսօր գրում եմ առաջինը քեզ:

Նախ և առաջ ասեմ, որ զգացված եմ քո եղբայրական ուշադրությունից: Ամենքն են ինձ մոռացել, և միայն դու ես որ հիշում ես ինձ ամեն ժամանակ: Այսպես է վկայում հենց ամենից շատ «Հայաստանի կօօպերացիան»<sup>1</sup> միակ հայերեն պարբերականը, որ ես ստանում եմ և որի միջոցով կապ եմ պահպանում ժամանակակից հայության հետ: Մի օր էլ ստացա «Բանակի օրը»<sup>2</sup> որ ինձ, իմ մենության տաղտկալի օրերում, մեծ հրճվանք պատճառեց: Հայության ներկա օրերի ձեռնարկություններից ոչ մեկն էլ ինձ վստահություն չի ներշնչում, բացի մեր զորքից. և թե կա մի բան որ ես կկամենայի տեսնել գերեզման իջնելուց առաջ, այդ միմիայն հայկական բանակն է: Կարող ես, ուրեմն, հասկանալ, թե որպիսի հաճությամբ կարդացի քո ուղարկած թերթը: Այսօր էլ նա սեղանիս վրա է իբրև մի քաղցրիկ հիշատակարան, որ ինձ ասում է ամեն օր. «Չէ՛, Հայոց գրականությունը դեռ չէ մեռել, դեռ կան շատերը, որոնք գրիչ շարժել գիտեն»: Այդ ուրախացուցիչ շատերի մեջ դու առաջին տեղն ես բռնում: Նոր չեմ ես հիացմունքով կարդում քո հոդվածները, բայց այս մեկը՝ ինձ ամենից բարձրը թվաց: Եվ ես էլի ասում եմ. «Դավիթ, Դավիթ, հանցանք ես գործում՝ թաքցնելով այդպիսի մի շքեղ գրիչ»: Շատ հավանեցի նաև պ. Վահան Նավասարդյանի հոդվածը, մի՛ նույնպես ոսկեղենիկ գրիչ, որ կարծեմ նույնպես դատապարտել է իրեն լռության: Հաստատը չգիտեմ. շատ ամիսներից ի վեր հայերեն լրագիր չեմ տեսել: Շնորհակալ եմ, ինձ էլ հիշել ես: Բայց ես հայրենի զինվորության «Գանձասարը» չեի ուզի մատուցանել: Ես կուզեի տալ նրան, ընթերցանության համար, հայ զինվորական հերոսների կենսագրությունները (օր. մեր Լազարևը, Դադատանը նվաճած Արղությանը և ուրիշ շատերը): Առայժմ գոնե կարողանայի Լազարևը տալ: Ես, իհարկե, Աշոտ Աթանասյանի նման չեմ գրի այդ մեծ հայի և մեծ զորավարի կյանքը: Բայց... մանկությանս հիշողությունների մեջ այժմ շուտ շուտ է իր բարի դեմքը ցույց տալիս իմ հորաթույրը, որի գլուխը դողում էր ծերությունից և ձայնն էլ դողդոջուն էր. նա միշտ գանգատավոր էր բախտից և ասում էր. «Ի՛նչ անեմ, սում չունիմ, սամավար չունիմ» (սում = сума, իսկ սամավար ունենալն այն ժամանակ Շուշում համարվում էր ունևորության պսպղուն նշան): Ահա ես էլ այդպես եմ...

Քո երկտողի մեջ ավելացնում էիր. «Ի՛նչ լավ կլիներ որ այստեղ լինեիր»: Շատ մարդիկ են այդ միևնույն խոսքերն ասել ինձ: Նրանց տված պատասխանս ահա քեզ էլ եմ գրում: Ես չեմ գալիս Երևան նույնիսկ մասնավոր գործով, նույնիսկ աղջկաս տեսնելու համար, որովհետև ամաչում եմ Հայոց հանրապետությունից: Հայաստանն ինձ համար խորթ մայր է դառել: Մենք որ նրանով ենք ապրել, մենք որ ամբողջ մեր կյանքում արհամարված ենք եղել, «տիրացու-ազգասեր» նախատական հորջորջումներով հալածված, այսօր, երբ մեր գաղափարն է կենդանանում, դեն ենք շարտված, մոռացված, իսկ մեր երագած Հայաստանը հարագատ ու գթառատ մայր է զանազան Յուրի Թամամչևների և այլ վայելողների համար, որոնց կլանածը տասնյակ միլիոններով է հաշվում: Երեք-չորս ամիս առաջ աչքերիս հիվանդության մի նոր հարված եկավ ինձ կուրության դուռը հասցնելու: Այս մեծ դժբախտությունն ինձ հարկադրեց առաջ ու առաջ իմ կիսատ մնացած գործի մասին մտածել: Երկու տարի է, աղաղակում եմ, ու չեմ կարողանում մի օգնություն գտնել և մի քարտուղար վարձել, մի գրագիր ունենալ որպեսզի դժբախտ աչքերիս քիչ հոգնություն պատճառեմ: Ես վեր կացա ու դիմեցի Հայոց կառավարության: Մի րոպե միամտություն ունեցա հավատալու թե գործ ունեմ սոցիալիստական կառավարության հետ, մի րոպե հավատացի թե ճիշտ որ՝ այդպիսի կառավարության պարտականությունն է պետական պաշտպանություն ցույց տալ աշխատանքին, ապահովել աշխատավորին: Եվ ես ողորմություն, ծրի նպաստ չեի խնդրում դաշնակցական սոցիալիստ և հայ գրող պ. Աղբալյանից: Ես նրան առաջարկում էի գնել իմ գրադարանը և այսպիսով ինձ միջոց տալ առաջ տանելու Հայաստանի պատմությունը: Բայց նա ինձ

<sup>1</sup> Հայկոպի պաշտոնաթերթ «Հայաստանի կօօպերացիա» երկշաբաթաթերթի խմբագրի պաշտոնը Դ. Անանունը ստանձնել է 1919 թ. օգոստոսին:

<sup>2</sup> «Բանակի օր»-ը տպագրվել է մեկ անգամ, 1919 թ. դեկտեմբերի 21-ին՝ ՀՀ խորհրդարանի նախագահության նախաձեռնությամբ: Նպատակը հայոց բանակի մեծարումն էր: Խմբագիրներն են եղել Դ. Անանունը, Ս. Վրացյանը և Եր. Հարությունյանը:

մերժեց, ցինիկաբար ավելացնելով թե ինքը մտադիր է, մյուս գրողների հետ միասին, ինձ էլ ցամաք հացի փող տալ: Ահա ինչ զարհուրելի ամոթ է ծանրանում Երևանի վրայ, և ես ամաչում եմ տեսնել մի այդպիսի ամոթ այս երկրում, ուր մտածում են պետություն ստեղծել: Աշխարհի վրա չի գտնվի և ոչ մի երկիր, նույնիսկ [Օտոմանյան?], ուր «հանրային կրթության և արվեստի միևնույն» տիտղոսով պճնազարդված մի մարդ այնտեղ այդքան վայրենի հասկացողություն ունենա մարդկային մտքի և աշխատանքի մասին: Ես երկու թուղթ ունեմ գրած Երևանի հանրային կրթության միևնույնիստիկան. եթե թեզ հաջողվեր կարդալ այդ երկու թղթերը, այն ժամանակ դու կհասկանայիր իմ դրությունը: Բանն այն է, սիրելի Դավիթ, որ ես միամտություն եմ ունեցել գրելու այդ կրթական բյուրոկրատին ամեն ինչ, նկարագրել եմ ամեն ինչ – իմ դրությունը, հիվանդությունը, իմ կատարած աշխատանքը: Եվ ահա ինձ շարունակ տանջում է այն միտքը թե ինչո՞ւ գրեցի, ինչո՞ւ սրտաբաց եղա հայ բյուրոկրատի առջև: Պ. Աղբալյանը կարող է պարծենալ, որ հարկադրեց ինձ փշրվել ամոթից: Ես, երևի, մի հատ օրինակն եմ, որ բացասական պատասխան ստացա Չայոց կառավարությունից: Չէ՞ որ նույն Աղբալյանը 100 հազար դրեց Սևումյանի<sup>1</sup> ձեռքին՝ Կ. Պոլսում դերասաններ պատրաստելու համար: Հարկը չկա որ ուրիշ համեմատություններ բերեմ, դու ինձանից ավելի շատ բան գիտես: Անցյալ օրը նախկին «Լոնդոն» հյուրանոցի առջև մի հասարակ մարդ կանգնեցրեց ինձ, բոլորովին անծանոթ, և առանց առաջաբանների ասաց. «Պ. Լեո, ի սեր Աստծո, լավ պահեցե՞ք Ձեզ, չմրսե՞ք, չհիվանդանա՞ք. Դուք այնքան հարկավոր եք մեր պատմությունը գրի առնելու համար. Ձեր առաջին հատորն առել, կարդացել եմ, հիմա սպասում եմ մյուս հատորներին»: Մինչև սրտիս խորքը հուզվեցի այս խոսքերից. և ամբողջ ժամանակ աչքիս առջև էր համեմատությունը – մի կողմից այս հասարակ ու անկեղծ մարդը, մյուս կողմից՝ հանրային կրթության նախարար Աղբալյանը: Հայ ազգը թե չէ անհետացել աշխարհի երեսից, պատճառն այս հասարակ մարդիկն են և ոչ թե մեր պ. միևնույնիստիկան մարդիկ:

Գրում եմ այս տողերը և շարունակ զգում եմ, որ դու հարցնում ես «Է՞լի զանգատ...»: Այո, ես շարունակ զանգատներ էի գրում թեզ, տարիներից ի վեր: Բայց ի՞նչ ասեմ, որպեսզի դու ավելի էլ զարմանաս իմ ճակատագրի վրա: Կարծում էինք թե հայ գրողը մարդկային իրավունքների տեր աշխատավոր կդառնա, հենց որ մենք կունենանք մեր պետությունը, մեր կառավարությունը: Այժմ տեսանք թե ինչ բան է եղել այդ կառավարությունը: Նա ամսական 200 միլիոն ծախսելու կարողություն է զգում իր մեջ, բայց հայոց գրականության շարտում է միայն մուրացկանի ողորմություն – չոր հացի փող: Ու՞ր պարտկենք այս անորակելի ամոթը: Մեր աչքի առջև են վրաց գրողները: Կառավարությունը նրանց բաց է թողել մի միլիոն ռուբլի և այսօր նրանք ապահովված են: Անցյալները մեծ ամոթով կարդացի որ վրացիներից մեկը, Դիասամիձեն, 500 ռուբլու ողորմություն է ուղարկել հայ գրողների ընկերությանը և Հովհաննես Թումանյանն էլ, ճիշտ մուրացկանական հոգեբանությամբ, նրան շնորհակալություն էր գրել: Եվ իրավ, հայ գրողն այնքան ողորմելի բան է դարձել, որ նրան կարելի է «բարերարել» նույնիսկ 500 (նախկին հաշվով 5) ռուբլով: ... Քառասուն տարի աշխատես գրականության մեջ, կորցնես աչքերդ, որպեսզի այսօր, ծեր ու հիվանդ, տեսնես, որ երեխաներդ այս ձյուն ձմռան պատառոտված կոշիկներով են գնում դպրոց: Ներքնաշապիկ անգամ չունեն: Իսկ միևնույն ժամանակ մի Ահարոնյան իր ամբողջ ընտանիքը տարել է Պարիզ և պահում է այնտեղ, լրկ այն պատճառով, որ դաշնակցական է և սովից կտտորվող հայ ժողովրդի միլիոնները նրա տրամադրության տակ են: Ես թե՛լ եմ այսպիսի սոցիալական «արդարության» վրա և փառք եմ տալիս ցարիզմին, գոնե նա այս աստիճան ցինիկ չէր: Բայց ինդրում եմ չկարծես, թե ես այս խոսքերով ուզում եմ խղճահարել մեկին, ողորմություն ինդրել: Ոչ, ոչ: Ես դեռ շատ ունեմ իմ և իմ երեխաների գլուխը պահելու համար: Այժմ ես դարձել եմ հնավաճառ: Ծախեցի հոբեյանիս ժամանակ ինձ նվիրած ոսկե գրիչը և արծաթե իրեղենները. այժմ էլ ծախում եմ հանում հոբեյանական պապկաները, հանելով նրանց միջից ինձ մատուցած ուղերձները: Դեռ մի շարք այսպիսի վաճառքներ կան աչքիս առջև. կծախեմ կապրեմ: Ուզում եմ ապրել որքան կարող եմ, որպեսզի մարդկանց ճակատին խփեմ նրանց վատ գործերը: Երևակայիր. անցած ամառը ես 500 օրինակ «Չայոց պատմություն» ծախեցի կառավարության, կարծելով որ նա

<sup>1</sup> Օվի (Հովհաննես) Մամիկոնի Սևումյանը (1878-1920) Կովկասի հայկական թատրոնների դերասան, ռեժիսոր և թատերական գործիչ էր, դերասանուհի և երգչուհի Լյուսի Սևումյանի ամուսինը: Մահացել է 1920 թ. մայիսին՝ Կ. Պոլսում, թաղված է Թիֆլիսում:



կրթական իր բազմաթիվ դպրոցներին, մանավանդ իր երևելի համալսարանին, իսկ պ. Աղբալյանն այժմ այդ գրքերը բազար է հանել և ծախում է, ցույց տալու համար, որ ինքը թեև մինիստր է, բայց և այնպես՝ դուբանչիության հոգեբանությունն է կրում իր մեջ: Մի հարյուր հատ մնացել է ինձ մոտ այդ գրքից և չեմ կարողանում ծախել, որովհետև լուսավորության մինիստրությունն ավելի էժան է ծախում: Եվ չասես, սիրելի Դավիթ, թե ես չգիտեմ ինչն է պ. Աղբալյանի այս տեսակ վարմունքի իսկական պատճառը: Ես էլ գիտեմ, որ այստեղ շատ հին հաշիվներ կան թաղված: Բայց հենց այդ է ամենից ողբալին, որ հայոց նորակազմ պետության մեջ շարունակում են բորբոքված մնալ հայի հին կրթերը: Ո՞ր է պետականությունը, ո՞ր է այն հարազատությունը, որ դու կանչում ես քո հողվածի մեջ այնքան սրտառուչ կարոտով:

Անձնական հաշիվ արդյունք չէ՞ որ Հայաստանի համալսարանի բացման հանդեսին հրավեր են ստանում ամենքը, բացի ինձանից, որ 6 հազար երես Հայոց պատմություն ունեմ գրած: Ի՞նչ եմ ասում: Դավիթ Չավրիևը այժմ գրադարան է կազմում համալսարանի համար մի հրեա բուքինիստի ցուցմունքներով, իսկ մենք, հայագետներս, հեռացված ենք, ոչ մի մասնակցություն չունենք: Այսքան է ապիկար հայոց կառավարությունը Նույնիսկ ամենաթերև գործերի մեջ: Եվ բնական է, որ ես այժմ, ավելի քան երբևիցե, զգամ ինձ մենակ, ամենքից լքված, ինքս իմ ճակատագրիս թողնված: Ունեմ մի քանի հատ իսկական բարեկամներ, որոնց մեջ առաջինը դու ես: Իրանց մոտ եմ կարողանում բաց անել սիրտս, պատմել ճակատագիրս: Չզարմանաս, ուրեմն, որ այսքան երկար նամակ գրեցի քեզ: Իմ դրությունն այժմ այսպես է: Վերջացրի երրորդ հատորս, հասցրի պատմությունը 19-րդ դարին և մնացել եմ կանգ առած: Նույնիսկ թուղթ չունեմ, որ շարունակեմ գործս, սկսեմ 19-րդ դարը: Թուղթ գնելու համար պետք է առնվազն մի 1200 ռուբլի: Երկրորդ հատորս կիսատ է մնացել. լրացնելու համար նախ հարկավոր է արտագրել մի 1000 երես, իսկ ես այդքան աչքեր չունեմ: Ի՞նչ անեմ, - չգիտեմ: Ծով կյութեր եմ հավաքել, դե՞ն անեմ արդյոք. երևի այդպես էլ կլինի ի մեծ դժբախտություն իմ և Հայ ազգի պատմության: Ժողովրդական կուսակցությունը գնել է «Մշակը», խոսում են որ ինձ տան ղեկավարությունը: Պիտի համաձայնեմ, թե կարգին կազմակերպություն ունենա գործը: Եվ այն ժամանակ - մնաս բարով իմ խաղաղ կաթինետային պարապմունք: Պիտի վերջացնեմ գրական գործունեությունս նրանով, ինչով սկսել եմ: Բայց բավական է որքան գրեցի: Սրտումս էլի շատ բան մնաց, բայց ձեռքս հոգնել է:

Ինձանից բարևներ Բախչի Իշխանյանցին<sup>1</sup>: Այս քանի օրը նրա գրվածքները կարդալով էի զբաղված: Հայտնում եմ նրան իմ հիացմունքը: Այդքան լուրջ հետազոտություններ ես չեմ տեսել մեր գրականության մեջ:

Ընդունիր և դու իմ անվերջ բարևները:

Քո Ա. Բաբխանյան

## 5

**ԳԱԹ, Դ. Անանունի ֆոնդ, վավ. 56, թ. 1-4:**

**Թիֆլիս, հուլիսի 30, 1920**

Սիրելի Դավիթ

Ծախելով ինչ որ կարելի էր ծախել՝ մի կտոր հացի դառն ու կրակ հարցից գոնե մասամբ թեթևանալու համար, եկա հասա մի «հոգեպահուստի», որի մասին երկար ու բարակ խոսել չեմ

<sup>1</sup> Բախչի Իշխանյան (1879-1921 թթ.)՝ հայ հասարակական-քաղաքական գործիչ, տնտեսագետ, խմբագիր: Ավարտել է Շուշիի թեմական դպրոցը, սովորել Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: 1901 թ. ընդունվել է 1905 թ. ավարտել է Լայպցիգի առևտրի ինստիտուտը: 1903 թ. մասնակցել է Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կապմակերպության (սպեցիֆիկներ) հիմնադրմանը, եղել նրա գաղափարախոսներից մեկը: Թղթակցել է Թիֆլիսի «Մշակին», «Մուրճին», «Արշալույսին», խմբագրել սպեցիֆիկների «Կյանք» պաշտոնաթերթը: 1918-1920 թթ. ղեկավարել է Հայաստանի Հանրապետության վիճակագրական բաժնի տեսչությունը: Հեղինակ է մի շարք աշխատությունների:

ուզում, ահա ուղարկում եմ քեզ որ տեսնես և, եթե, իհարկե, կարողանաս, գնես քո «Կոոպերացիայի»<sup>1</sup> համար: Չզարմանաս որ «Հայրենի հիշատակները» «Կոոպերացիային» եմ ուղարկում, որովհետև եթե «Կոոպերացիան» էլ չլիներ, պիտի տանեի նպարավաճառի մոտ, որին, կարծեմ, հարկավոր էլ չէր գա թղթի բարակության պատճառով:

Ախպեր ջան, մեր սոցիալիստական դարում մենք հասանք այն օրին, որ հայերեն գիրք ոչ ոք չէ հարցնում: Չեն կարդում, չէ՛: Մեռավ մեր գրականությունը, մեռնում ենք և մենք, գրողներս: Դու ես միայն չէ, որ այս խենթ ու խելառ ժամանակ դեռ խնություն ունես որ քո «Կոոպերացիայի» մի փոքրիկ փեղկում ապաստան տալ հայոց անբախտ գեղարվեստական գրականության: Դե որ այդպես է, համեցե՛ք, ահա մենք էլ կգանք քո դուռը կտրելու և մեր ձեռագիրները առաջարկելով, հաց խնդրելու:

Ես վճռել էի չտպագրել այս աշխատությունս քանի կենդանի եմ, ուզում էի թողնել ժառանգներիս իբրև ընտանեկան սրբություն, որ մահիցս հետո տպեն: Բայց հիմա ի՞նչ ժամանակներ են այսպիսի քմահաճույքներ ունենալու: Քաղցած ենք և մերկ ենք բառիս բուն նշանակությամբ: Աշխատանքի հաղթանակի ժամանակ պիտի լինեին մեր օրերը: Բայց ահա աշխատում եմ գրաստի չափ և դարձյալ քաղց հագեցնել չեմ կարողանում...

Ինչևհից: Խնդիրքս է, կարդա՛, եթե հարմար կդատես «Կոոպերացիայիդ» համար ամբողջը, վերցրու և մաս մաս տպագրիր: Եթե ամբողջը չկարողանաս, անճար ենք, վաճառում ենք և մաս մաս, ընտրություն արա՛ և գոնե մի քանիսը տպագրիր, և տուր ինձ հոնորար, որ ապրեմ: Այս բոլոր պատկերներից, ինչպես գիտես, «Գանձասարն» է միայն, որ տպված է. մնացածները միանգամայն կույս են:

Իմ պայմանը հարցնես, ես միայն այս կիսնդրեի, որ այս գլխից տայիր ինձ գոնե մի 10 հազար ռուբլի (այստեղի փողով), որ մի ամսվա ապրուստ էլ չի անում: Ինձ համար սա կլիներ մի մեծ օգնություն: Մնացածը հաշվելը քեզ եմ թողնում: Իմ բանը դու ինձանից լավ ես իմանում: Միայն մի պայման էլ այն է, որ ձեռագիրս պահվի մաքուր և անարատ և վերադարձվի ինձ: Ինչ վերցնելու ես, արտագրել տուր:

Իսկ եթե բոլորովին մերժես ամբողջ գործը, բարի կլինես ձեռագիրս տալ, իհարկե, աղջկաս:

Ասած է՝ «Ոչ միայն հացիվ կեցցե մարդը»: Թեև այժմ այս բանը սարսափելի կերպով ծաղրվում է, բայց ես էլի ուզում եմ հին մարդ մնալ և հարցնում եմ քեզ:– Ո՞նց է իմ գեղարվեստը: Ո՞նց եմ իմ վերջալույսին: Եթե հավանես, մի շարք պատկերներ էլ ունեմ մտքիս մեջ, կգրեմ: Եթե չէ, կթողնեմ իմ գրականության այս սեռը:

Սեղմում եմ ձեռքդ եղբայրական:  
Քո Լեօ  
Կոչդ ուշ ստացանք: Կտպենք

**ԳԱԹ, Դ. Անանունի ֆոնդ, վավ. 55, թ. 1:**

**Թիֆլիս, օգոստոսի 21, 1920**

Սիրելի Դավիթ

Նամակդ ստացա, Աշոտինն էլ հանձնեցի իրան: Շնորհակալ եմ, որ ընդունել ես «Հիշատակներս», միայն մի գանգատ ունեմ - չափազանց էժան եք գնահատել: Այստեղ լրագրական տողի համար նշանակված է վարձ երեք ռուբլի: Ես չեմ ասում, թե այս հայկական իրականության համապատասխանող կարգ է, բայց և այնպես, «Մշակի» տողի համար վճռվեց առայժմ գոնե երկու ռուբլու հասցնել տողավարձը: Քո գրած հինգ հազար ռուբլին խոստացել էին բերել ինձ, բայց դեռ

<sup>1</sup> Խոսքը վերաբերում է Դ. Անանունի կողմից խմբագրվող «Հայաստանի կոօպերացիա» երկշաբաթաթերթին:

չեն բերել: Միմիայն այն պատճառով, որ ներկայումս ես բոլորովին անճար եմ, պիտի ընդունեմ այդ գումարը: Դու էլ տպիր ինչ ուզում ես, մի երկու շաբաթից հետո գալու եմ Երևան, կխոսենք, կվերջացնենք: «Պոռնկորդու» արարքը Աշոտը ժխտում է: Ինձ ասաց, թե Դավթի ամբողջ աշխատությունն ինձ մոտ է գտնվում:

Ողջույններով քո Լեօ

7

**ԳԱԹ, Դ. Անանունի ֆոնդ, վավ. 57, թ. 13:**

**Թիֆլիս, սեպտեմբերի 18, 1920**

Սիրելի Դավիթ

Ես քեզ հետ ձեռագրի առիթով որևէ անհամություն չեմ թույլ տա ինձ անել:

Հինգ հազար ռուբլին ստացել եմ վաղուց, վաղուց էլ կերել: Գրվածքս ամբողջովին քեզ եմ տալիս, սկսի՛ր տպել, միայն ձեռագիրս չփչացնես, որպեսզի հետ դարձնես:

Անթիվ ողջույններով

Քո Լեօ

Աշոտին չեմ տեսել, տեսելուց կասեմ:

8

**ԳԱԹ, Դ. Անանունի ֆոնդ, վավ. 58, թ. 14:**

**Թիֆլիս, հունվարի 31, 1922**

Սիրելի Դավիթ.

Ուղարկեցի քեզ Ղարաբաղի և Երևանի թեմական դպրոցների պատմությունները. Բարեգործական ընկերությունը<sup>1</sup> չունեմ. Խանազատը վաղուց է վերցրել իր լրագիրները... Չարմանում եմ, որ Էջմիածին գտնվելով, ինձնից ես ուզում զանազան հաստատությունների տեղեկագրերը: Ոչ մի տեղ այնքան շատ չի գտնվի այդ բաներից, ինչպես Էջմիածնում: «Արարատը» լիքն է այդպիսի հաշիվներով: Երևի լավ չես խախալել:

Ուրախ եմ, որ պիտի տպվի աշխատությունդ, բայց արդյոք այնքա՞ն երկարակյաց պիտի լինի ձեր ինստիտուտը, որ տեսնե գիրքդ տպած, վերջացած: Չեմ կարծում: Մի քանի օր առաջ Մակինցյանն ինձ ասաց, թե պիտի փակի այդ հիմնարկությունը, որ ոչինչ օգուտ չէ բերում:

Նամակիդ սկզբում մի հանճար էիր ուրիշ. փոխադարձաբար ես էլ քո վերաբերմամբ չեմ գրում, որովհետև դու, այնուամենայնիվ, մեր Դավիթն ես:

Անչափ բարևներով

Քո Լեօ:

**Овик Григорян, Айк Мхоян, ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА И ЛЕО.**

Опубликованные письма принадлежат перу двух армянских интеллигентов-представителей

<sup>1</sup> Խոսքը վերաբերում է Լեոյի նախկինում տպագրված աշխատություններին:

разных поколений, проявивших активную общественно-политическую и научную плодотворную деятельность в первом десятилетии XX века: Лео [Аракел Бабаханян (1860-1932)] и Давиту Анануну [Тер-Даниелян (1880-1943)].

Письма этих двух деятелей, имевшие некоторые интересные совпадения и оказавшие определенное влияние на развитие армянской историографической мысли того времени, примечательны с точки зрения как выявления условий профессиональной деятельности живущих в отмеченный исторический период историков и их влияния на развитие армянской историографической мысли, так и расширения представлений об армянской общественно-политической жизни того времени.

Будучи талантливыми людьми, и Лео, и Д.Ананун помимо историографии занимались также ораторством, проблемами культуры и иных сфер, что проявилось в их письмах. Поочередно избираясь председателями земляческого союза Карабаха, они проявляли большую, искреннюю заботу о своей малой родине, Карабахе, её судьбе. В этом аспекте ценно письмо Лео, описывающее события, происходящие в Арцахе.

Опубликованные письма интересны также с точки зрения представления мировоззрения данного исторического периода и эмоционального состояния, господствующего среди интеллигенции.

Представленные в письмах Лео характеристика и оценка дают нам возможность обобщить образ Д.Анануна не только как человека и гражданина, но и как историка и мыслителя..

**Ключевые слова:** *Давит Ананун, Лео, письма, армянская история, Карабах, материальное состояние, интеллигенция.*

**Hovik Grigoryan, Haik Mkhoyan, FROM THE LETTERS OF DAVID ANANUN AND LEO.** The letters, being published, belong to two representatives of different generations active in their public-political and vigorous scientific activity in the first decades of the XXth century, Leo (Arakel Babakhanyan (1860-1932)) and David Ananun (Ter-Danielyan (1880-1943)). The letters of these figures, who had a number of points in common and had a certain influence on the development of the Armenian historical thought, are noteworthy in terms of the professional activities of the historians of that era, their influence on the Armenian historical thought, as well as of broadening our understanding of Armenian public and political life.

Being talented publicists, in addition to historical studies both Leo and David Ananun were also engaged in public speaking, cultural and other issues, which were reflected in their letters. Successively being elected as the leaders of the Karabakh Compatriotic Union, they took great care of their little homeland and were genuinely concerned about its fate. In this respect, Leo's letter describing the events occurred in Artsakh is of particular value.

The letters under publication are also of interest in terms of creating an idea of the prevailing moods in the atmosphere of the mentioned historical period and among the intelligentsia. Descriptions and assessments given in Leo's letters also allow to complete D. Ananun's image of a human, citizen, historian and intellectual.

**Key words:** *David Ananun, Leo, letters, Armenian history, Karabakh, Republic of Armenia, material situation, intelligentsia.*